է Ճորոխին, որ Բաթումից 3 կիլոմետր հեռաւորութեամբ թափւում է Սեւ Ծովը կաղմելով մի մեծ դելտա 8 կիլոմետր լայնութեամբ եւ 11 կիլոմետր երկարութեամբ:

ԺԶ.

Կոբուլէտի եւ Կինդրիշի:

Բաթում քաղաքից եւ նաւահանգստից դէպի հիւսիս մինչեւ Կոբուլետի կայարանը, մինչեւ Աչխուա առուակը Աջարայի մասն է կազմում: Ճորոխի դելտան են թափւում Կապնիս-Թավի, Կապանդեբի, Էրգէ, Զաչօ, Խելվաչաուրի, Շիրաբուձէ, Կախաբերի դաշտում ճմեռանոցներ. Թոփալ-օղլի, Մէհլէ, Ստեփանովկա եւ Լիմանի թաղ: Բաթումի հարաւային Ախսաշէն լեռներից իջնում է համանուն առուն, որ ոռոգում է համանուն գեղը, Սօուգսու, Իջադիէ, Մահմուդիէ եւ Ֆէյիզէ արուարձանները եւ Բաթում քաղաքի մօտ թափւում է ծովը:

Կորոնիս-Թավի լ-ից իջնում է համանուն առուակը, Օթաբաթում, Ագարա, Կապրիշաուն եւ Բարձէխանա գեղերը ոռոգելով՝ թափւում է ծովը: Ապա Կարադերէ, Մանել-օղլի, Բագրատ-օղլի, Մախինճաուրի առուները համանուն գեղերը ոռոգելով թափւում են ծովը: Զակվիսմթա լեռներից համանուն եւ Բեգլեմար, Մորվել լեռներից Զակվիսծղալի, Զակվիսթավի լեռներից